

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2017 ԹՎԱԿԱՆԻ  
ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՆԱԽԱԳԾԻ  
ԱՄՓՈՓ ՆԿԱՐԱԳԻՐ**



**Պատրաստվել է Բյուջետային գրասենյակի կողմից**

**ԵՐԵՎԱՆ-2016**

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐ .....	3
2. ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐ.....	7
3. ԾԱԽՍԵՐԻ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐ.....	9
• Պետական իշխանության մարմինների պահպանման ծախսեր.....	9
• Առողջապահություն.....	10
• Հանգիստ, մշ.ակտիվ լ և կրոն.....	12
• Կրթություն.....	13
• Գիտություն.....	14
• Սոցիալական պաշտպանություն.....	14
• Գյուղատնտեսություն.....	17
• Զբոսային տնտեսություն.....	18
• Էներգետիկ ենթակառուցվածքներ և բնական պաշարներ.....	19
• Տրանսպորտ և կապ.....	20
• Բնապահպանություն.....	22
• Տնտեսական զարգացում և ներդրումներ.....	23
• Քաղաքաշինություն.....	24
• Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի կադաստր.....	24
• Պաշտպանություն.....	25
• Հասարակական կարգ, անվտանգություն, փրկարար ծառայություն և կալանավայրերի պահպանություն.....	25
• Հատկացումներ համայնքների բյուջեներին.....	26
• Հայաստանի Հանրապետության կառավարության պահուստային ֆոնդի և նյութական ռեսուրսների պետական պահուստի ձևավորման և պահպանման ծախսեր.....	26
4. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՆԱԽԱԳԾԻ ԴԵՖԻՑԻՏԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐՆ ՈՒ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏՔԸ.....	27
5. ԱՂՅՈՒՍԱԿՆԵՐ.....	29

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ  
ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐ**

**Տնտեսության նկարագրություն**

Համախառն առաջարկ

Համաշխարհային ֆինանսական ճգնաժամից հետո Հայաստանի տնտեսական աճի կառուցվածքում տեղի են ունեցել որակական տեղաշարժեր՝ ի օգուտ ավելի արտադրողական ճյուղերի: 2015 թվականին տնտեսական աճը հիմնականում պայմանավորված էր տնտեսության արտահանելի ոլորտներով: 2015թ. 3.0% աճ է արձանագրվել, պայմանավորված հիմնականում գյուղատնտեսության 13.2% և արդյունաբերության 7.6% աճերով: Ընդ որում, նշված ժամանակահատվածում գյուղատնտեսության ոլորտի հաշվին ապահովվել է տնտեսական աճի 2.4 տոկոսային կետը, իսկ արդյունաբերությունը ապահովել է տնտեսական աճի 1.2 տոկոսային կետը: Ծառայությունների ճյուղն աճել է 0.6%-ով, տնտեսական աճին նպաստելով 0.3 տոկոսային կետով, շինարարությունը նվազել է 3.1%-ով՝ 0.3 տոկոսային կետով բացասական նպաստում ունենալով տնտեսական աճին:

2016 թվականին ներքին տնտեսական զարգացումների միտումները և արտաքին աշխարհից եկող զարգացումները հիմք են հանդիսացել 2016 թվականին 2.4% տնտեսական աճի կանխատեսման համար:

2017 թ. տնտեսական աճը արագացող կլիմայի պայմանավորված ինչպես արտաքին զարգացումներով՝ մասնավորապես Ռուսաստանի տնտեսության և պղնձի համաշխարհային գների վերականգնմամբ, այնպես էլ 2016 թ. իրականացված խթանող հարկաբյուջետային և դրամավարկային քաղաքականությամբ: 2017 թ. համար իրական ՀՆԱ-ի աճը կանխատեսվում է ավելի բարձր՝ 2016 թ. համեմատությամբ՝ 3.2%-ի չափով, որին հիմնականում կնպաստեն ծառայությունների և արդյունաբերության ճյուղերը:

Համախառն պահանջարկ

2015 թ. տնօրինվող եկամտի իրական նվազման պայմաններում վերջնական սպառումը իրական արտահայտությամբ նվազել է 6.3%-ով: 2016-2017թթ. կանխատեսվում է վերջնական սպառման աճ: 2016 թ. ակնկալվում է սպառման 2.8% իրական աճ՝ պայմանավորված մասնավոր սպառման աստիճանական վերականգնմամբ: 2017 թ. տնտեսական աճի տեմպերի արագացման, տնօրինվող եկամտի աճի և 2016 թ. իրականացված խթանող դրամավարկային քաղաքականության ազդեցության պայմաններում կանխատեսվում է սպառման 3.4% իրական աճ:

2015 թվականին կապիտալ ներդրումները իրական արտահայտությամբ նվազել են 1.2%-ով: 2016թ. ակնկալվում է ներդրումների 2.3% իրական աճ: 2017թ. պարտքի կայունության խնդրով պայմանավորված պետական ներդրումների նվազման ազդեցությամբ կանխատեսվում է ներդրումների 2.2% իրական նվազում:

Ջուտ արտահանման հետճգնաժամային բարելավման միտումը շարունակվել է նաև 2015 թվականին, որին զգալիորեն նպաստել է արտահանման աճը: 2015 թվականին ապրանքների և ծառայությունների արտահանումն իրական արտահայտությամբ աճել է 4.9%-ով, իսկ ներմուծումը՝ նվազել 14.1%-ով: Ներմուծման աճի նկատմամբ արտահանման առաջանցիկ աճի պայմաններում զուտ արտահանումը 2016-2017թթ. կշարունակի

բարելավվել: 2016 թվականին վերոնշյալ գործոնների ազդեցությամբ կանխատեսվում է արտահանման 14.3% և ներմուծման 3.0% իրական աճ: 2017թ. արտաքին պահանջարկի աստիճանական աճի պայմաններում կանխատեսվում է արտահանման 4.4% իրական աճ, իսկ տնօրինվող եկամտի աճի պայմաններում՝ ներմուծման շուրջ 2% իրական աճ:

### Գնային փոփոխականներ

2015 թվականի դեկտեմբերին արձանագրվել է գնանկում, 12-ամսյա ցուցանիշը կազմել է -0.1%: Վերջինս առավելապես պայմանավորվել է պարենային ապրանքների (ներառյալ ոգելից խմիչքը և ծխախոտ) ապրանքախմբում արձանագրված 3.7% գնանկումով (բացասական նպաստումը գնաճին՝ 1.8 տոկոսային կետ), ոչ պարենային ապրանքների խմբում արձանագրված 3.4% գնաճով (դրական նպաստումը գնաճին՝ 0.7 տոկոսային կետ) և բնակչությանը մատուցված ծառայությունների ոլորտում արձանագրված 3.2% սակագների հավելաճով (դրական նպաստումը գնաճին՝ 0.98 տոկոսային կետ): 2015 թվականին միջին գնաճը կազմել է 3.0:

2016 թ. մինչև տարեվերջ կպահպանվի ցածր գնանկումային միջավայր: Գնաճի ցուցանիշը կգտնվի ( $4 \pm 1.5$ ) թույլատրելի միջակայքի ստորին սահմանից ներքև:

*ՀՆԱ դեֆլյատոր*: 2015 թվականին ՀՆԱ դեֆլյատորը կազմել է 101.2%:

Մինչև տարեվերջ, ՀՆԱ դեֆլյատորի աճ չի կանխատեսվում, իսկ 2017 թվականին, դեֆլյատորը կկազմի շուրջ 101.7%:

### Ֆինանսական շուկա

2013-2015 թվականներին տնտեսության աճի կայունացման զուգահեռ փողի զանգվածի միջին աճը կազմել է 11.3%: 2016 թ. հուլիսին փողի զանգվածն աճել է 13.4% նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ:

2013-2015 թվականներին փողի բազայի միջին աճը կազմել է 11.2%: 2016 թ. հուլիսին փողի բազան նվազել է 5.3% նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ:

2015 թ. դեկտեմբերի վերջի դրությամբ նախորդ տարվա համեմատ ՀՀ առևտրային բանկերի կողմից ռեզիդենտներին և ոչ ռեզիդենտներին տրված վարկերը նվազել են 68.8 մլրդ դրամով կամ 3.1%-ով և կշիռը ՀՆԱ-ի մեջ կազմել է 42.1%: (2014թ.-ի դեկտեմբերի վերջի դրությամբ նախորդ տարվա համեմատ աճը կազմել էր 390 մլրդ ՀՀ դրամ կամ 21.7%): 2016 թ. հուլիսին նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ նկատմամբ վարկավորման աճի տեմպի արագացում է նկատվել, տնտեսության վարկավորման ծավալն ավելացել է 116 մլրդ ՀՀ դրամով կամ 5.6%-ով:

ՀՀ առևտրային բանկերի կողմից ռեզիդենտներից և ոչ ռեզիդենտներից ներգրավված ավանդները (ՀՀ դրամով և արտարժույթով) 2015 թ. դեկտեմբերի վերջի դրությամբ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ավելացել են 194 մլրդ. ՀՀ դրամով, կամ 11%-ով և ՀՆԱ-ի մեջ կազմել 38.8%: 2016 թ. հուլիսին նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ ավանդներն աճել են 231 մլրդ. ՀՀ դրամով (12.5%-ով):

### Վճարային հաշվեկշիռ

2015 թ. ընթացիկ հաշիվը շարունակել է ՀՆԱ-ի նկատմամբ նախորդ տարիներին ձևավորված կրճատման միտումը՝ 4.9 տոկոսային կետով բարելավվելով նախորդ տարվա մակարդակը և կազմելով ՀՆԱ-ի 2.7% (2014թ-ին՝ 7.6%): Ակնկալվում է, որ 2016 թ. ՀՆԱ-ի

նկատմամբ ընթացիկ հաշվի պակասուրդը մոտ կլինի նախորդ տարվա մակարդակին՝ մոտ 2.8% (2015թ-ին՝ 2.7%), իսկ 2017 թ. այն կխորանա՝ կազմելով 3.4%:

Արտաքին ապրանքաշրջանառությունը 2016 թ. առաջին ութ ամիսների արդյունքներով նախորդ տարվա համեմատ աճել է 4.6%-ով (3114.7 մլն ԱՄՆ դոլար): Ընթացիկ տարվա հունվար-օգոստոս ամիսներին տեղի է ունեցել դոլարային արտահայտությամբ արտահանման ծավալների 18.9% աճ և ներմուծման ծավալների 2.1% անկում:

2017 թ. ներմուծման աճի միտումը կվերականգնվի՝ կազմելով շուրջ 6%, ինչը հիմնականում պայմանավորված կլինի ներքին տնտեսության զարգացումներով և տնօրինվող եկամտի աճով:

2017 թ.՝ համաշխարհային թողարկման աճին, Ռուսաստանում տնտեսական ակտիվության վերականգնմանը և ՀՀ կառավարության կողմից տնտեսության արտահանելի ոլորտում տարվող քաղաքականության ուղղությանը համահունչ, ակնկալվում է, որ արտահանումը կաճի շուրջ 7% (դոլարային արտահայտությամբ):

*Փոխարժեք.* Ընթացիկ տարվա հունվար-հուլիս ամիսներին միջին փոխարժեքը կազմել է 482.81 դրամ 1 ԱՄՆ դոլարի դիմաց՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ արժեզրկվելով 1.2%-ով:

### Պետական հատված

2015 թ. պետական բյուջեի ընդհանուր եկամուտները կազմել են ՀՆԱ-ի 23.2%՝ նախորդ տարվա նկատմամբ նվազելով 0.5 տոկոսային կետով, իսկ հարկային եկամուտները՝ ներառյալ պարտադիր սոցիալական ապահովության վճարները, կազմել են ՀՆԱ-ի 21.2%-ը՝ նախորդ տարվա նկատմամբ նվազելով 0.8 տոկոսային կետով: Նախորդ տարվա նկատմամբ պետական բյուջեի եկամուտների անվանական աճը կազմել է 2.0%, իսկ հարկային եկամուտներինը՝ ներառյալ սոցիալական ապահովության վճարները՝ 0.4%:

ՀՀ պետական բյուջեի ծախսեր/ՀՆԱ ցուցանիշը 2015 թ. արդյունքներով նախորդ տարվա նկատմամբ աճել է 2.4 տոկոսային կետով և կազմել 28.0%:

2016 թ. հունվար-հուլիսին նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ պետական բյուջեի եկամուտների գծով արձանագրվել է -0.3% անկում, իսկ հարկային եկամուտների մասով՝ 1.6% աճ:

ՀՀ պետական բյուջեի ծախսերը 2016 թ. հունվար-հուլիսին նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ աճել են 2.7%-ով, որից ընթացիկ ծախսերի գծով արձանագրվել է աճ՝ 4.4%-ով, իսկ կապիտալ ծախսերի գծով արձանագրվել է 29% նվազում:

### **Հիմնական մակրոտնտեսական ցուցանիշներ**

Ցուցանիշներ	2013	2014	2015	2016	2017
	փաստ.	փաստ.	փաստ.	կանխ.	կանխ.
Անվանական ՀՆԱ, մլրդ դրամ	4555.6	4828.6	5032.1	5149.9	5405.0
Իրական ՀՆԱ ինդեքս	103.3	103.6	103.0	102.4	103.2
ՀՆԱ դեֆլյատոր	103.4	102.3	101.2	100.0	101.7
Գնաճ (12-ամսյա) %	5.6	4.6	-0.1	0.1	2.4
Գնաճ (միջին) %	5.8	3.0	3.7	-1.2	1.4
<b><i>ՀՆԱ իրական աճն ըստ ճյուղերի ավելացված արժեքների</i></b>					
ՀՆԱ	3.3	3.6	3.0	2.4	3.2

Արդյունաբերություն	6.3	-0.9	7.6	5.0	5.5
Գյուղատնտեսություն	7.6	6.1	13.2	4.0	4.0
Շինարարություն	-7.4	-4.5	-3.1	-1.5	0.0
Ծառայություններ	3.1	6.7	0.6	2.6	2.8
Զուտ հարկեր	3.6	1.8	-5.1	-2.0	3.0
<b><u>Արտաքին հարված</u></b>					
Ապրանքների և ծառայությունների արտահանում, մլն. ԱՄՆ դոլար	3156	3319	3137	3417,2	3606,8
Ապրանքների և ծառայությունների ներմուծում, մլն. ԱՄՆ դոլար	5476	5487	4418	4484,8	4713,4
Ապրանքների արտահանում, մլն. ԱՄՆ դոլար	1636	1698	1624	1846,4	1975,6
Ապրանքների ներմուծում, մլն. ԱՄՆ դոլար	3832	3754	2810	2810,3	2976,7
Ապրանքների արտահանման աճ, %	7,9	3,8	-4,4	13,7	7,0
Ապրանքների ներմուծման աճ, %	5,6	-2,0	-25,1	0,0	5,9
Ընթացիկ հաշիվ, մլն. ԱՄՆ դոլար	-813	-883	-279	-302,3	-380,8
<b><u>ՀՆԱ-ի նկատմամբ տոկոս</u></b>					
Ապրանքների և ծառայությունների հաշվեկշիռ	-20.9	-18.7	-12.2	-9.9	-10.0
Ապրանքների և ծառայությունների արտահանում	28.4	28.6	29.8	31.8	32.5
Ապրանքների և ծառայությունների ներմուծում	49.2	47.3	42.0	41.8	42.4
Առևտրային հաշիվ	-19.7	-17.7	-11.3	-9.0	-9.0
Ընթացիկ հաշիվ (ներառյալ պաշտոնական տրանսֆերտները)	-7.3	-7.6	-2.7	-2.8	-3.4

**Հայաստանի Հանրապետության 2017 թվականի համախմբված բյուջեն կկազմի՝ եկամուտների գծով՝ 1,244.4 մլրդ դրամ (առանց միջբյուջետային փոխանցումներից ստացվող մուտքերի), ծախսերի գծով՝ 1,394.5 մլրդ դրամ (առանց միջբյուջետային փոխանցումների), դեֆիցիտը (պակասուրդը)՝ 150.1 մլրդ դրամ:**

**Հայաստանի Հանրապետության համայնքների 2017 թվականի բյուջեները կկազմեն՝**

**եկամուտների գծով՝ 133,3 մլրդ դրամ (ներառյալ՝ պետական բյուջեից ստացվող պաշտոնական դրամաշնորհները), ծախսերի գծով՝ 133,3 մլրդ դրամ:**

**Հայաստանի Հանրապետության 2017 թվականի պետական բյուջեն կկազմի՝ եկամուտների գծով՝ 1,210,100,744.2 մլրդ դրամ , ծախսերի գծով՝ 1,360,200,744.2 մլրդ դրամ , դեֆիցիտը (պակասուրդը)՝ 150,100,000.0 մլրդ դրամ:**

.2.

**ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐ**

«Հայաստանի Հանրապետության 2017 թ. պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի նախագծում եկամուտների ընդհանուր գումարը ծրագրվել է 1,210.1 մլրդ դրամի չափով, 2016 թ. համար հաստատված 1,186.3 մլրդ դրամից և 2015 թ. փաստացի ստացված 1,131.3 մլրդ դրամ համադրելի գումարների դիմաց:

**ՀՀ 2015-2017 թթ. պետական բյուջեների եկամուտների կառուցվածքը**

Եկամտատեսակը	2015 թ. համադրելի փաստացի		2016 թ. պետական բյուջեով հաստատված		2017 թ. պետական բյուջեի նախագիծ	
	մլրդ դրամ	%-ով ընդամենի նկատմամբ	մլրդ դրամ	%-ով ընդամենի նկատմամբ	մլրդ դրամ	%-ով ընդամենի նկատմամբ
<b>Ընդամենը, որից՝</b>	<b>1,131.3</b>	<b>x</b>	<b>1,186.3</b>	<b>x</b>	<b>1,210.1</b>	<b>x</b>
Հարկային եկամուտներ և պետական տուրքեր	1,065.3	94.2	1,129.0	95.2	1,135.0	93.8
Պաշտոնական դրամաշնորհներ	28.3	2.5	31.5	2.7	31.0	2.6
Այլ եկամուտներ	37.7	3.3	25.8	2.2	44.1	3.6

Ակնկալվում է, որ ՀՀ 2017 թ. պետական բյուջեի եկամուտներ/ՀՆԱ հարաբերությունը կկազմի 22.4%՝ 2016 թ. համար հաստատված 21.8%-ի և 2015 թվականի փաստացի 22.5%-ի դիմաց:

**ՀԱՐԿԱՅԻՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐ**

Պետական բյուջեի հարկային եկամուտները և պետական տուրքերը 2017 թ. համար ծրագրվել են 1,135.0 մլրդ դրամի չափով՝ 2016 թ. համար հաստատված և 2015 թ. փաստացի համադրելի մուտքերի համապատասխանաբար՝ 1,129.0 և 1,065.3 մլրդ. դրամի դիմաց:

Հարկային եկամուտների և պետական տուրքերի 2017 թ. ծրագրային մակարդակը կազմում է ՀՆԱ-ի 21.0%-ը՝ 2016 թ. համար ծրագրային և 2015 թ. փաստացի համապատասխանաբար 20.7%-ի և 21.2%-ի դիմաց:

Ինչպես և նախորդ տարիներին, 2017 թ. հարկային եկամուտների և պետական տուրքերի գծով տարեկան ցուցանիշը ծրագրվել է ըստ նախորդ տարիների հավաքագրման և մակրոտնտեսական միջավայրի զարգացման միտումների, տնտեսական գործոնների և վարչարարական միջոցառումների իրականացումից ակնկալվող լրացուցիչ մուտքերի:

Նախորդ տարիների հավաքագրման և մակրոտնտեսական միջավայրի զարգացման միտումների հիման վրա հարկային եկամուտները և պետական տուրքերը 2017 թ. համար ծրագրվել են 1,110.8 մլրդ դրամի չափով, ներառյալ ավելացված արժեքի հարկի գծով հետ վերադարձի գումարները:

Ըստ տնտեսական գործոնների (այդ թվում՝ վարչարարական միջոցառումների) իրականացումից 2017 թ. ակնկալվում է հավաքագրել 24.2 մլրդ. դրամ:  
Տես աղյուսակ N 20:

### ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՆԵՐ

Օտարերկրյա պետություններից և միջազգային կազմակերպություններից 2017 թ. ակնկալվում է ստանալ 31,0 մլրդ. դրամի չափով պաշտոնական դրամաշնորհներ: Մասնավորապես, 2017 թ. պաշտոնական դրամաշնորհների ստացում է նախատեսվում՝

Եվրոպական հարևանության շրջանակներում ՀՀ-ԵՄ գործողությունների ծրագրով նախատեսված ընդհանուր բնույթի բյուջետային օժանդակություն պաշտոնական դրամաշնորհային (չկապակցված դրամաշնորհներ) ծրագրերից՝ 17.3 մլն եվրո կամ 9.2 մլրդ. դրամ:

Նպատակային օժանդակություն պաշտոնական դրամաշնորհային (կապակցված դրամաշնորհներ) ծրագրերից՝ 46.0 մլն ԱՄՆ դոլար կամ 21.8 մլրդ. դրամ, որից՝

Եվրոմիության աջակցությամբ իրականացվող դրամաշնորհային ծրագրերի շրջանակներում՝ 18.4 մլն ԱՄՆ դոլար կամ 8.7 մլրդ. դրամ,

ՌԴ աջակցությամբ իրականացվող Հայկական ԱԷԿ-ի N2 էներգաբլոկի շահագործման նախագծային ժամկետի երկարացման ծրագրի շրջանակներում՝ 3.3 մլն ԱՄՆ դոլար կամ 1.6 մլրդ. դրամ,

ԳԴՀ զարգացման վարկերի բանկի աջակցությամբ իրականացվող դրամաշնորհային ծրագրերի շրջանակներում՝ 4.7 մլն ԱՄՆ դոլար կամ 2.2 մլրդ. դրամ,

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող դրամաշնորհային ծրագրերի շրջանակներում՝ 6.4 մլն ԱՄՆ դոլար կամ 3.0 մլրդ. դրամ,

Եվրոպական ներդրումային բանկի աջակցությամբ իրականացվող Հյուսիս-Հարավ տրանսպորտային միջանցքի ծրագրի (3-րդ տրանշ) շրջանակներում՝ 2.0 մլն ԱՄՆ դոլար կամ 1.0 մլրդ. դրամ,

Դանիայի թագավորության աջակցությամբ իրականացվող գյուղական կարողությունների ստեղծում դրամաշնորհային ծրագրի շրջանակներում՝ 1.7 մլն ԱՄՆ դոլար կամ 0.8 մլրդ. դրամ,

Գլոբալ հիմնադրամի աջակցությամբ իրականացվող ՀՀ-ում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի և տուբերկուլյոզի դեմ պայքարի ուժեղացում դրամաշնորհային ծրագրերի շրջանակներում՝ 4.7 մլն ԱՄՆ դոլար կամ 2.3 մլրդ. դրամ,

Արևելյան Եվրոպայի էներգախնայողության և բնապահպանական գործընկերության ֆոնդի աջակցությամբ իրականացվող դրամաշնորհային ծրագրերի շրջանակներում՝ 3.1 մլն ԱՄՆ դոլար կամ 1.5 մլրդ. դրամ,

Այլ դրամաշնորհային ծրագրերի շրջանակներում՝ 1.7 մլն ԱՄՆ դոլար կամ 0.8 մլրդ. դրամ:

### ԱՅԼ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ

Նախագծով այլ եկամուտների գծով մուտքերը 2017 թ. համար ծրագրվել են 44.1 մլրդ. դրամի չափով՝ 2016 թ. համար հաստատված 25.8 մլրդ. դրամի և 2015 թ. փաստացի 37.8 մլրդ. դրամի դիմաց:

2016 թվականի համար հաստատված ցուցանիշի նկատմամբ 2017 թվականի ծրագրային ցուցանիշի աճի գործոններից մեկը պայմանավորված է պետության կողմից տրված վարկերի օգտագործման դիմաց տոկոսավճարներից մուտքերով:



### 3.

### ԾԱԽՍԵՐԻ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐ

2017 թ. պետական բյուջեի նախագծով ծախսերի ծավալը ծրագրավորվել է շուրջ 1,360.2 մլրդ դրամի չափով: Ծախսերի ամբողջ ծավալի 93.0 %-ը կամ 1,264.6 մլրդ դրամը բաժին է ընկնում ընթացիկ ծախսերին, 7.0 %-ը կամ 95.6 մլրդ դրամը՝ ոչ ֆինանսական ակտիվների գծով գուտ ծախսերին:

2017 թ. պետական բյուջեի նախագծի ծախսային մասը << 2016 թ. պետական բյուջեի հաստատված մակարդակի համեմատ պակասել է շուրջ 16.8 մլրդ դրամով, ինչը պայմանավորված է պետական պարտքի կառավարման նկատառումներով պետական բյուջեի դեֆիցիտի նվազեցման անհրաժեշտությամբ:

Սոցիալական բնագավառի ծախսերի (կրթություն, առողջապահություն, սոցիալական պաշտպանություն) տեսակարար կշիռը բյուջետային ծախսերի ամբողջ ծավալում կազմում է 45.8%, պաշտպանության, հասարակական կարգի պահպանության և ազգային անվտանգության ապահովման և կալանավայրերի ոլորտներին՝ 21.2%, տնտեսության ճյուղերին՝ 8.4%, պետական պարտքի սպասարկմանը՝ 8.8%, համայնքների բյուջեներին << պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման դոտացիաների և այլ դոտացիաների տրամադրմանը՝ 3.6 %, << կառավարության պահուստային ֆոնդի ձևավորմանը՝ 0.6% :

Հարկ է նշել, որ 2017 թ. պետական բյուջեի նախագծում ծախսային ծրագրերը հիմնականում դասավորված են ծրագրային բյուջետավորման սկզբունքներին համապատասխան:

Տես աղյուսակներ՝ N 1, N 2 և N 3:

#### *ՊԵՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԾԱԽՍԵՐ*

Պետական իշխանության մարմինների պահպանման ծախսերի հիմնական ուղղությունները.

<< դեսպանությունների և ներկայացուցչությունների պահպանման ծախսերը 2017 թ. համար ծրագրավորվել են 9635.0 մլն դրամի չափով, որը 2016 թ. մակարդակը գերազանցում է 91.4 մլն դրամով:

2017 թ. նախատեսվում է անցկացնել << Ազգային ժողովի, ինչպես նաև Երևան քաղաքի ավագանու հերթական ընտրությունները: Բացի այդ, 2017 թ. պետական բյուջեում միջոցներ են նախատեսվել նաև ընթացիկ տարվա տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների համար: Այդ կապակցությամբ ծախսերը ծրագրավորվել են համապատասխանաբար՝ 2,524.4 մլն դրամի, 591.6 մլն դրամի և 183.6 մլն դրամի չափով:

<< օրենսդիր, գործադիր և դատական իշխանության մարմինների պահպանման ծախսերի ընդհանուր գումարը (առանց այս ոլորտում իրականացվող նպատակային վարկային և դրամաշնորհային ծրագրերի) 2017 թ. պետական բյուջեի նախագծում ծրագրված է 88175.9 մլն դրամի չափով, որը 2015 թ. փաստացի նկատմամբ կազմում է 97.5%, իսկ 2016 թ. համար հաստատվածի նկատմամբ՝ 95.5%:

Միաժամանակ պետական կառավարման (ապարատի) շրջանակներում և այլ ոլորտներում նախատեսվում են շարունակել և իրականացնել արտաքին աղբյուրներից ստացվող նպատակային վարկային և դրամաշնորհային միջոցներով 10 ծրագրեր, որոնցից ամենախոշորներն են՝

ՀԲ աջակցությամբ իրականացվող Հարկային վարչարարության արդիականացման ծրագիր. 2017թ. ծրագրված է 950.9 մլն. դրամ, այդ թվում վարկային միջոցներ՝ 775.5 մլն. դրամ, համաֆինանսավորում՝ 175.4 մլն. դրամ;

ՀԲ աջակցությամբ իրականացվող առևտրի և ենթակառուցվածքների զարգացման ծրագիր. 2017թ. ծրագրված է 387.6 մլն. դրամ, այդ թվում վարկային միջոցներ՝ 300.5 մլն. դրամ, համաֆինանսավորում՝ 87.1 մլն. դրամ;

ՀԲ աջակցությամբ իրականացվող Տարածքային զարգացման հիմնադրամի ծրագիր. 2017թ. ծրագրված է 1,683.3 մլն. դրամ, այդ թվում վարկային միջոցներ՝ 1,325.8 մլն. դրամ, համաֆինանսավորում՝ 312.5 մլն. դրամ;

ՀԲ աջակցությամբ իրականացվող Սոցիալական ներդրումների և տեղական զարգացման դրամաշնորհային ծրագիր. 2017թ. ծրագրված է 383.1 մլն. դրամ դրամաշնորհային միջոցներ;

ԵՄ աջակցությամբ իրականացվող Հայաստանի տարածքային զարգացման դրամաշնորհային ծրագիր. 2017թ. ծրագրված է 3,034.2 մլն. դրամ, այդ թվում դրամաշնորհային միջոցներ՝ 2,578.1 մլն. դրամ, համաֆինանսավորում՝ 456.1 մլն. դրամ:

Տես աղյուսակ N 4:

#### ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

2017թ. պետական բյուջեի նախագծով նախատեսված առողջապահության բնագավառի ծախսերը կազմում են 85,772.9 մլն դրամ: Ծախսերը նվազել են Հայաստանի Հանրապետության 2016 թ. պետական բյուջեի համապատասխան ցուցանիշի նկատմամբ 2,668.9 մլն դրամով կամ 3.0 տոկոսով:

2017 թ. պետական բյուջեի նախագծով առողջապահության ծախսերում՝

«Դեղագործական ապրանքներ» դասի շրջանակներում նախատեսվում է երկու ծրագրերի իրականացում 4,017.8 դրամ արժեքով՝ 2016 թ. 4,262,9 մլն դրամի դիմաց;

«Արտահիվանդանոցային ծառայություններ» խմբի գծով նախատեսվել է 27,457.7 մլն դրամ 2016 թ. 27,705.2 մլն դրամի դիմաց:

2017թ. արտահիվանդանոցային բուժօգնության շրջանակներում նախատեսվում է տասնչորս ծրագրերի իրականացում: Որոնցից են՝

«Բնակչության առողջության առաջնային պահպանման ծառայություններ» ծրագիրը՝ 10,948.2 մլն դրամ 2016 թ. 11,213.7 մլն դրամի դիմաց:

«Նեղ մասնագիտացված բժշկական օգնության ծառայություններ» ծրագիրը՝ 4,091.3 մլն դրամ 2016 թ. 4,100.1 մլն դրամի դիմաց:

«Մանկաբարձագինեկոլոգիական բժշկական օգնության ծառայություններ» ծրագիրը՝ 1,615.4 մլն դրամ 2016 թ. 1,632.5 մլն դրամի դիմաց:

«Հեմոդիալիզի և պերիտոնիալ դիալիզի անցկացման ծառայություններ» ծրագիրը՝ 751 հիվանդի բուժում 2,080.0 մլն դրամ գումարով՝ 2016 թվականի 715 հիվանդի և 1,980.0 մլն դրամի դիմաց կամ 36 հիվանդով և 100.0 մլն դրամով ավելի:

«Լաբորատոր-գործիքային փխտորոշիչ հետազոտություններ» ծրագիրը՝ 3,202.0 մլն դրամ՝ 2016 թ. չափով:

«Շտապ բժշկական օգնության ծառայություններ» ծրագիրը՝ 3,292.3 մլն դրամ՝ 2016 թ. չափով:

«Հիվանդանոցային ծառայություններ» խմբի գծով նախատեսվում է 39,179.9 մլն դրամ՝ 2016 թ. 39,818.9 մլն դրամի դիմաց:

2017 թվականին հիվանդանոցային բուժօգնության շրջանակներում նախատեսվում է տասնյոթ ծրագրերի իրականացում: Որոնցից են՝

«Սոցիալապես անապահով և հատուկ խմբերում ընդգրկվածներին բժշկական օգնության ծառայություններ» ծրագիրը՝ 6,188.9 մլն դրամ՝ 2016 թ. 6,205.6 մլն դրամի դիմաց:

«Անհետաձգելի բժշկական օգնության ծառայություններ» ծրագիրը՝ 1,848.6 մլն դրամ՝ 2016 թ. 1,910.0 մլն դրամի դիմաց: Նշյալ ծրագրիժ 56.4 մլն դրամ տեղափոխվել է «Դեղագործական ապրանքներ» դաս:

«Զինծառայողներին, ինչպես նաև փրկարար ծառայողներին և նրանց ընտանիքի անդամներին բժշկական օգնության ծառայություններ» ծրագիրը՝ 2,195.3 մլն դրամ՝ 2016 թ. 2,201.2 մլն դրամի դիմաց:

«Պետական հիմնարկների և կազմակերպությունների աշխատողների բժշկական օգնության և սպասարկման ծառայություններ» ծրագիրը՝ 1,765.3 մլն դրամ՝ 2016 թ. 1,867.6 մլն դրամի դիմաց:

«Տուբերկուլյոզի բժշկական օգնության ծառայություններ» ծրագիրը՝ 1,411.0 մլն դրամ՝ 2016 թ. 1,453.3 մլն դրամի դիմաց:

«Աղիքային և այլ ինֆեկցիոն հիվանդությունների բժշկական օգնության ծառայություններ» ծրագիրը՝ 1,217.2 մլն դրամ՝ 2016 թ. 1,225.3 մլն դրամի դիմաց:

«Հոգեկան և նարկոլոգիական հիվանդությունների բժշկական օգնության ծառայություններ» ծրագիրը՝ 2,809.2 մլն դրամ՝ 2016 թ. 2,887.1 մլն դրամի դիմաց:

«Ուռուցքաբանական և արյունաբանական հիվանդությունների բժշկական օգնության ծառայություններ» ծրագիրը՝ 1,115.1 մլն դրամ՝ 2016 թ. 1,125.4 մլն դրամի դիմաց:

«Արտի վիրահատության ծառայություններ» ծրագիրը՝ 3,077.5 մլն դրամ՝ 2016 թ. 3,085.7 մլն դրամի դիմաց:

«Թրաֆիքինգի զոհերին բժշկական օգնության ծառայություններ» ծրագիրը՝ 2.2 մլն դրամ՝ 2016 թ. չափով:

«Մանկաբարձական բժշկական օգնության ծառայություններ» ծրագիրը՝ 6,679.0 մլն դրամ՝ 2016 թ. 6,945.2 մլն դրամի դիմաց:

«Երեխաներին բժշկական օգնության ծառայություններ» ծրագիրը՝ 8,021.6 մլն դրամ՝ 2016 թ. 8,043.2 մլն դրամի դիմաց:

Հանրային առողջապահական ծառայություններ» խմբի գծով նախատեսվում է 5,142.7 մլն դրամ 2016 թ. 5,605.5 մլն դրամի դիմաց կամ 462.8 մլն դրամով պակաս: Պակասեցման 75.6 տոկոսը պայմանավորված է «Բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման և հանրային առողջապահության ծառայություններ» ծրագրի գծով ծախսերի նվազմամբ:

Հանրային առողջապահական ծառայությունների շրջանակներում նախատեսվում է 5 ծրագրերի իրականացում: Որոնցից են՝

«Բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման և հանրային առողջապահության ծառայություններ» ծրագիրը՝ 2,876.2 մլն դրամ՝ 2016 թ. 3,230.0 մլն դրամի դիմաց:

Իմունականիսարգելման ազգային ծրագիրը՝ 1,890.4 մլն դրամ՝ 2016 թ. չափով:

«Առողջապահական հարակից ծառայություններ և ծրագրեր» դասի գծով 2017 թ. նախատեսվում է 8,033.3 մլն դրամ 2016 թ. 9,087.9 մլն դրամի դիմաց կամ 1,054.6 մլն դրամով պակաս (այդ թվում վարկային և դրամաշնորհային ծրագրերի գծով՝ 1,232.1 մլն դրամով): Ամենախոշոր ծրագիրը «Առողջապահական օբյեկտների

շինարարություն» ծրագիրն է, որի գծով նախատեսվել է 1,312.0 մլն դրամ՝ 2016 թվականի 1,100.0 մլն դրամի դիմաց:

Միաժամանակ առողջապահության ոլորտում նախատեսվում են շարունակել և իրականացնել արտաքին աղբյուրներից ստացվող նպատակային վարկային և դրամաշնորհային միջոցներով ծրագրեր, որոնցից են՝

ՀԲ աջակցությամբ իրականացվող Ոչ վարակիչ հիվանդությունների կանխարգելման և վերահսկման ծրագիր. 2017թ. ծրագրված է 2,591.2 մլն. դրամ, այդ թվում վարկային միջոցներ՝ 2,183.6 մլն. դրամ, համաֆինանսավորում՝ 407.6 մլն. դրամ:

ՀԲ աջակցությամբ իրականացվող Ոչ վարակիչ հիվանդությունների կանխարգելման և վերահսկման դրամաշնորհային ծրագիր. 2017թ. ծրագրված է 198.5 մլն. դրամ դրամաշնորհային միջոցներ:

Գլոբալ հիմնադրամի աջակցությամբ իրականացվող «Հայաստանի Հանրապետությունում տուբերկուլոզի դեմ պայքարի ուժեղացում» դրամաշնորհային ծրագիր. 2017թ. ծրագրված է 1,534.8 մլն. դրամ, այդ թվում դրամաշնորհային միջոցներ՝ 1,392.5 մլն. դրամ, համաֆինանսավորում՝ 142.4 մլն. դրամ:

Գլոբալ հիմնադրամի աջակցությամբ իրականացվող «Հայաստանի Հանրապետությունում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի դեմ պայքարի ազգային ծրագրին աջակցություն» դրամաշնորհային ծրագիր. 2017թ. ծրագրված է 717.1 մլն. դրամ, այդ թվում դրամաշնորհային միջոցներ՝ 625.5 մլն. դրամ, ՀՀ համաֆինանսավորում՝ 91.6 մլն. դրամ:

Տես աղյուսակ N 5:

#### *ՀԱՆԳԻՍ, ՄՇԱԿՈՒՅԹ ԵՎ ԿՐՈՆ*

Հանգստի, մշակույթի և կրոնի բնագավառի ՀՀ 2017 թ. նախատեսված հատկացումները կազմում են 26,199.5 մլն դրամ՝ 2016 թ. 26,900.8 մլն դրամի դիմաց:

Պետական կառավարման մարմինների պահպանման ծախսերը կազմում են 1,384.8 մլն դրամ՝ 2016 թ. 1,421.1 մլն դրամի դիմաց:

Հիմնանորոգման և շինարարության համար նախատեսված հատկացումները կազմում են 1,086.0 մլն դրամ՝ 2016 թ. 1,419.5 մլն դրամի դիմաց:

*Հանգստի և սպորտի ծառայությունների* համար 2017 թ. նախատեսված են 1,665.4 մլն դրամ հատկացումներ՝ 2016 թ. 1,838.2 մլն դրամի դիմաց:

*Մշակութային ծառայությունների* համար 2017 թ. նախատեսված են 13,798.0 մլն դրամ հատկացումներ՝ 2016 թվականի 14,211.8 մլն դրամի դիմաց:

Գրադարանների գծով 2017 թ. նախատեսված են 1,718.8 մլն դրամ հատկացումներ՝ 2016 թվականի 1,772.5 մլն դրամի դիմաց:

Թանգարանների և ցուցասրահների գծով 2017 թ. նախատեսված են 2,231.8 մլն դրամ հատկացումներ՝ 2016 թ. 2,481.7 մլն դրամի դիմաց:

Մշակույթի տների, ակումբների, կենտրոնների գծով 2017 թ. նախատեսված են 47.0 մլն դրամ հատկացումներ՝ 2016 թ. 204.5 մլն դրամի դիմաց:

Այլ մշակութային կազմակերպությունների գծով 2017 թ. նախատեսված են 1,482.0 մլն դրամ հատկացումներ՝ 2016 թ. 854.4 մլն դրամի դիմաց:

Արվեստի գծով 2017 թ. նախատեսված են 7,254.0 մլն դրամ հատկացումներ՝ 2016 թ. 7,766.3 մլն դրամի դիմաց:

Կինեմատոգրաֆիայի գծով 2017 թ. համար նախատեսված են 653.7 մլն դրամ հատկացումներ՝ 2016 թ. 658.7 մլն դրամի դիմաց:

Հուշարձանների և մշակութային արժեքների վերականգնման և պահպանման գծով 2017 թ. համար նախատեսված են 410.6 մլն դրամ հատկացումներ՝ 2016 թ. 473.5 մլն դրամի դիմաց:

*Ռադիո և հեռուստահաղորդումների հեռարձակման և հրատարակչական ծառայությունների* իրականացման համար 2017 թ. նախատեսված են 8,620.5 մլն դրամ հատկացումներ՝ ՀՀ 2016 թ. 8,709.5 մլն դրամի դիմաց:

Հեռուստառադիոհաղորդումների գծով 2017 թ. նախատեսված են 7,125.0 մլն դրամ հատկացումներ՝ 2016 թ. 7,126.0 մլն դրամի դիմաց:

Հրատարակչությունների, խմբագրությունների գծով 2017 թ. նախատեսված են 1,112.7 մլն դրամ հատկացումներ՝ 2016 թ. 1,195.2 մլն դրամի դիմաց:

Տեղեկատվության ձեռքբերման գծով 2017 թ. նախատեսված են 382.7 մլն դրամ հատկացումներ՝ 2016 թ. 388.3 մլն դրամի դիմաց:

Կրոնական և հասարակական այլ ծառայությունների գծով 2017 թ. նախատեսված են 1,122.8 մլն դրամ հատկացումներ՝ 2016 թ. 1,123.1 մլն դրամի դիմաց:

Երիտասարդական ծրագրերի իրականացման համար 2017 թ. նախատեսված են 827.1 մլն դրամ հատկացումներ՝ 2016 թ. 827.4 մլն դրամի դիմաց:

Քաղաքական կուսակցություններին, հասարակական կազմակերպություններին, արհմիություններին, ազգային փոքրամասնություններին աջակցություն տրամադրելու նպատակով 2017 թ., ինչպես և 2016 թ., նախատեսված են 295.7 մլն դրամ հատկացումներ:

Տես աղյուսակ N 6:

#### ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

2017 թ. պետական բյուջեի նախագծով նախատեսված կրթության բնագավառի ծախսերը (առանց գիտության գծով ծախսերի) կազմում են 128,539.8 մլն դրամ՝ 23.5 մլն դրամով կամ 0.02 տոկոսով պակաս քան 2016թ.:

Կրթության ոլորտի ծախսերի հիմնական մասը կուղղվի.

*Հանրակրթության ոլորտին*, որի գծով 2017 թ. նախատեսվել է 77,423.3 մլն դրամ: Ծախսերի աճը 2016 թ. նկատմամբ կազմել է 463.7 մլն դրամ կամ 0.6 տոկոս:

«Ներառական կրթություն» ծրագրին. 2017 թ. նախատեսվել է 3,838.1 մլն դրամ: Ծախսերի աճը 2016 թ. համապատասխան ցուցանիշի նկատմամբ կազմել է 783.1 մլն դրամ կամ 25.6 տոկոս՝ պայմանավորված հիմնարկների թվի՝ 36-ով և երեխաների թվաքանակի՝ շուրջ 1.3 հազարով ավելացման հետ կապված ծախսերի աճով:

*Հարուկ կրթության և մասնագիտացված հանրակրթական ուսուցմանը*. 2017թ. նախատեսվել է 5,313.7 մլն դրամ՝ հատուկ և մասնագիտացված հանրակրթական դպրոցներում 4.6 հազար սաների ուսուցման կազմակերպման գծով: 2016 թվականին 30 հաստատություններում ընդգրկված 4.7 հազար սանի դիմաց: 2016 թ. նկատմամբ ծախսերը նվազել են 324.3 մլն դրամով կամ 5.8 տոկոսով:

«Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթություն» դասին. 2017 թ. նախատեսվել է 2,584.0 մլն դրամ, որը 2016 թ. նկատմամբ նվազել է 43.1 մլն դրամով կամ 1.6 տոկոսով:

«Միջին մասնագիտական կրթություն» դասին. 2017 նախատեսվել է 8,430.8 մլն դրամ, որը 2016 թ. նկատմամբ աճել է 639.3 մլն դրամով կամ 8.2 տոկոսով:

Բարձրագույն կրթության գծով 2017 թ. նախատեսվել է 11,951.2 մլն դրամ, որը 2016 թ. նկատմամբ նվազել է 282.6 մլն դրամով կամ 2.3 տոկոսով:

«Արտադարձական դաստիարակություն» դասին. 2017 թ. նախատեսվել է 4,484.3 մլն դրամ, որը 2016 թ. նկատմամբ նվազել է 215.8 մլն դրամով կամ 4.6 տոկոսով:

«Լրացուցիչ կրթություն» դասին. 2017 թ. նախատեսվել է 1,396.9 մլն դրամ, որը 2016 թ. նկատմամբ նվազել է 71.5 մլն դրամով կամ 4.9 տոկոսով:

Միաժամանակ կրթության ոլորտում նախատեսվում են շարունակել և իրականացնել արտաքին աղբյուրներից ստացվող նպատակային վարկային և դրամաշնորհային միջոցներով հետևյալ ծրագրերը.

ՀԲ աջակցությամբ իրականացվող Կրթության բարելավման ծրագիր. Ծրագրով նախատեսված աշխատանքների իրականացման նպատակով 2017թ. ծրագրված է 2,432.1 մլն. դրամ, այդ թվում վարկային միջոցներ՝ 2,117.6 մլն. դրամ, համաֆինանսավորում՝ 314.5 մլն. դրամ:

Ասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող Դպրոցների սեյսմիկ պաշտպանության ծրագիր. Ծրագրով նախատեսված աշխատանքների իրականացման նպատակով 2017թ. ծրագրված է 2,272.1 մլն. դրամ, այդ թվում վարկային միջոցներ՝ 1,735.1 մլն. դրամ, համաֆինանսավորում՝ 537.0 մլն. դրամ:

Տես աղյուսակ N 7:

#### ԳԻՏՈՒԹՅՈՒՆ

2017 թ. պետական բյուջեի նախագծով գիտության բնագավառի ծախսերը կազմում են շուրջ 14,425.4 մլն դրամ:

2017թ. պետական բյուջեի նախագծով ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի ապարատի պահպանման համար նախատեսվել է 160.6 մլն դրամ՝ 2016 թվականի հաստատված բյուջեի 160.3 մլն դրամի դիմաց:

2017 թ. պետական բյուջեի նախագծով գիտատեխնիկական գործունեության համար նախատեսվել է շուրջ 14264.8 մլն դրամ՝ 2016 թ. 14153.5 մլն դրամի դիմաց, կամ՝ 111.3 մլն դրամով ավել՝

*Բազային ֆինանսավորում* ստացող կազմակերպությունների համար 2017 թ. նախատեսվել է 10053.4 մլն դրամ՝ 2016 թ. 10004.5 մլն դրամի դիմաց:

*Պետական նպատակային-ծրագրային ֆինանսավորման* համար նախատեսվում է 1848.0 մլն դրամ՝ 2016 թ. չափով:

*Պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման* համար նախատեսվել է 1523.0 մլն դրամ՝ 2016 թ. 1359.2 մլն դրամի դիմաց, կամ աճը կազմում է 163.8 մլն դրամ:

*Գիտաշխատողների գիտական աստիճանների* համար հավելավճարներ տրամադրելու համար, նախատեսվել է 840.3 մլն դրամ՝ ընթացիկ տարվա 941.7 մլն դրամի դիմաց:

Տես աղյուսակ N 8:

#### ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

2017 թ. սոցիալական պաշտպանության ոլորտի ծախսերը կկազմեն 408 985.8 մլն դրամ կամ 2017 թ. պետական բյուջեի ծախսերը 2016 թ. հաստատված պետական բյուջեի նկատմամբ աճում են 3 822.6 մլն դրամով (2016 թ.՝ 405 163.2 մլն դրամ):

Սոցիալական պաշտպանության ոլորտի ծախսերը ըստ դասերի բնութագրվում են հետևյալ կերպ.

##### *Ծերություն*

«Սպայական անձնակազմի և նրանց ընտանիքների անդամների կենսաթոշակներ» ծրագրով նախատեսվում է 24 323.7 մլն դրամի չափով ծախս

(2016 թ.' 23 089.1 մլն դրամ): Ծախսերի աճը 1 234.5 մլն դրամի չափով հիմնականում պայմանավորված է կենսաթոշակառուների թվաքանակի աճով՝ 1 759 մարդով:

«Շարքային զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների կենսաթոշակներ» ծրագրով նախատեսվում է 634.9 մլն դրամի չափով ծախս (2016 թվականին՝ 655.1 մլն դրամ):

«Աշխատանքային կենսաթոշակներ» ծրագրով նախատեսվում է 223 469.5 մլն դրամի չափով ծախս (2016 թ.' 223 769.5 մլն դրամ):

«ՀՀ օրենքներով նշանակված կենսաթոշակներ» ծրագրով նախատեսվում է 2 632.3 մլն դրամի չափով ծախս (2016 թ.' շուրջ 2 724.0 մլն դրամ):

«Կուտակային կենսաթոշակային համակարգի ներդնում» ծրագրի գծով նախատեսվում է ծախս 28 688.1 մլն դրամի չափով 2016 թ. 26 760.4 մլն դրամի դիմաց: Ծախսերը 2016 թ. պետական բյուջեի նկատմամբ աճում են 1 927.8 մլն դրամով, որը պայմանավորված է կուտակային համակարգի մասնակիցների թվաքանակի աճով 13.4 հազ. մարդով կամ կանխատեսվում է 176.2 հազ. մարդ 2016 թ. 162.8 հազ. մարդու դիմաց՝ մասնակիցների միջին աշխատավարձի չափի շուրջ 2.4% աճի պայմաններում:

«Ծերության, հաշմանդամության, կերակրողին կորցնելու դեպքում սոցիալական նպաստներ» ծրագրով նախատեսվում է 13 958.5 մլն դրամի չափով ծախս (2016 թ.' 14 108.5 մլն դրամ): Ծախսերը նվազում են 150.0 մլն դրամով պայմանավորված նպաստ ստացողների թվաքանակի փոփոխությամբ (65 220 մարդ 2016 թ. 65 799 մարդու դիմաց) և նպաստի միջին ամսական չափի փոփոխությամբ (նախատեսվում է 17 835 դրամ 2016 թ. 17 868.2 դրամի դիմաց):

«Տարեցների և հաշմանդամություն ունեցող 18 տարին լրացած անձանց շուրջօրյա խնամքի ծառայություններ» ծրագրի գծով նախատեսվում է 2 173.9 մլն դրամ (2016 թ.' 2 186.3 մլն դրամ):

*Հարազատիկ կորցրած անձինք.*

«Կենսաթոշակառուի, ծերության, հաշմանդամության, կերակրողին կորցնելու դեպքում սոցիալական նպաստառուի մահվան դեպքում տրվող թաղման նպաստ» ծրագրով նախատեսվում է 4 909.0 մլն դրամի չափով ծախս (2016 թվականին՝ 4 969.2 մլն դրամ): Ծախսերի նվազումը 60.2 մլն դրամի չափով պայմանավորված է շահառուների թվի նվազմամբ կամ նախատեսվում է 24 545 2016 թվականի 24 846 դիմաց (2015 թ. փաստացի 24 033 մարդու նկատմամբ կիրառվել է շուրջ 2.14% աճ)՝ պահպանելով հուղարկավորությունը կատարող անձանց տրվող թաղման նպաստի չափը՝ 200.0 հազ. դրամ:

*Ընդանիքի անդամներ և զավակներ.*

«Ընտանիքի կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստներ» ծրագրի ծախսը կազմում է 39 498.3 մլն դրամ (2016 թ.' շուրջ 38 362.0 մլն դրամ): 2017 թ. ընտանեկան նպաստի միջին ամսական չափը կկազմի 31 442.2 դրամ 2016 թ. 30537.6 դրամի դիմաց՝ պահպանելով նպաստառուների թիվը՝ 104 685 ընտանիք: «Մինչև 2 տարեկան երեխայի խնամքի նպաստ» ծրագրով նախատեսվում է 2 866.5 մլն դրամի չափով ծախս (2016 թ.' 2 808.0 մլն դրամ): Ծախսերը աճում են 58.5 մլն դրամով, որը պայմանավորված է նպաստ ստացողների թվի աճով կամ նախատեսվում է 13 271 մարդ (2016 թ. 13 000 մարդու դիմաց)՝ նպաստի ամսական չափի պահպանման պայմաններում՝ 18 000 դրամ:

«Երեխայի ծննդյան միանվագ նպաստ» ծրագրով նախատեսվում է 9 550.7 մլն դրամի չափով ծախս (2016 թվականին՝ շուրջ 9 280.0 մլն դրամ):

2017 թ. կապահպանվի 2016 թ. համար նախատեսված երեխայի ծննդյան միանվագ նպաստի չափերը՝ առաջին և երկրորդ երեխայի ծննդյան դեպքում՝ 50.0 հազ. դրամ, երրորդ և չորրորդ երեխայի ծննդյան դեպքում՝ 1.0 մլն դրամ, իսկ հինգ և ավելի երեխայի ծննդյան դեպքում՝ 1.5 մլն դրամ (երրորդ և ավելի երեխայի ծննդյան դեպքում նաև ընտանեկան դրամագլխի (կապիտալ) համակարգը):

«Մայրության նպաստի վճարում» ծրագրով նախատեսվում է 10 432.6 մլն դրամ (2016 թ.՝ 9 794.8 մլն դրամ): Ծախսերը աճում են հիմնականում պայմանավորված չաշխատող անձանց՝ 28 900 (2016 թ. 30 004 անձի դիմաց) տրվելիք մայրության նպաստի (միանվագ շուրջ 127.0 հազ. դրամ) համար ծախսերի նվազմամբ՝ շուրջ 140.0 մլն դրամի չափով (ծախսերի նվազումը պայմանավորված է կանխատեսվող ծնունդների թվի նվազմամբ), ինչպես նաև միջին օրական նպաստի չափի աճով (միջին տարեկան 4.8% ավելի) կամ 4 236 դրամ (հաշվարկներում հաշվի է առնվել 2015 թվականի երկրորդ կիսամյակի փաստացի կատարողականը)՝ արդյունքում ծախսերը աճում են 777.8 մլն դրամով:

«Երեխաների շուրջօրյա խնամքի ծառայություններ» ծրագրով նախատեսվում է 2 045.2 մլն դրամ (2016 թ.՝ 2 075.7 մլն դրամ):

*Գործազրկություն.*

«Սեզոնային զբաղվածության խթանման միջոցով գյուղացիական տնտեսությանն աջակցության տրամադրում» ծրագրով նախատեսվում է հատկացնել 811.4 մլն դրամ (2016 թ.՝ շուրջ 1 126.0 մլն դրամ):

*Սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող).*

«ՎՏԲ-Հայաստան» ՓԲԸ-ում ավանդատու հանդիսացող քաղաքացիների, որպես նախկին ԽՍՀՄ Խնայքանկի ՀԽՍՀ հանրապետական բանկում մինչև 1993 թվականի հունիսի 10-ը ներդրված դրամական ավանդների դիմաց փոխհատուցում» ծրագրի գծով ծախսը կազմում է 1 485.1 մլն դրամ (պահպանվել է 2016 թ. մակարդակը):

*Սոցիալական պաշտպանություն (այլ դասերին չպատկանող)*

«Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանում (նախարարությունների աշխատակազմերի մասով) ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության պետական ծառայության և ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության միգրացիոն պետական ծառայության», «Սոցիալական օգնության ծառայությունների գործունեության կազմակերպման բնագավառում պետության կողմից համայնքի ղեկավարին պատվիրակված լիազորությունների իրականացման ֆինանսավորում», ինչպես նաև «Համալիր սոցիալական ծառայության տարածքային կենտրոնների աշխատողների այցելության ծախսերի փոխհատուցում» ծրագրերով ծախսերը կազմում են 4 876.9 մլն դրամ 2016 թ. 5 102.8 մլն դրամի դիմաց:

*Սոցիալական պաշտպանությանը տրամադրող օժանդակ ծառայություններ (այլ դասերին չպատկանող).*

«Կենսաթոշակային ապահովության, ծերության, հաշմանդամության, կերակրողին կորցնելու դեպքում սոցիալական նպաստների, պարգևավճարների,



պատվովճարների և այլ ծրագրերի վճարման հետ կապված ծառայություններ» ծրագրի գծով նախատեսվում է 1 941.1 մլն դրամ (2016 թ.՝ 2 816.3 մլն դրամ) «Ժամանակավոր անաշխատունակության դեպքում նպաստի վճարում» ծրագրի գծով նախատեսվում է 2 659.2 մլն դրամ (2016 թ.՝ շուրջ 2 616.0 մլն դրամ): Ծախսերի աճը 43.2 մլն դրամի չափով պայմանավորված է միջին օրական նպաստի չափի աճով (միջին տարեկան 4.8% ավելի):

«Պետական հիմնարկների և կազմակերպությունների աշխատողների սոցիալական փաթեթով ապահովում» ծրագրի ծախսը կազմում է 10 923.9 մլն դրամ (պահպանվել է 2016 թ. համար նախատեսված չափը): 2017 թ. նախատեսվում է սոցիալական փաթեթով ապահովել պետական հիմնարկների և կազմակերպությունների շուրջ 151.7 հազ. աշխատողի:

Միաժամանակ սոցիալական ապահովության ոլորտում նախատեսվում է շարունակել և իրականացնել արտաքին աղբյուրներից ստացվող նպատակային վարկային և դրամաշնորհային միջոցներով հետևյալ ծրագիրը.

ՀԲ աջակցությամբ իրականացվող Սոցիալական պաշտպանության ոլորտի վարչարարության երկրորդ ծրագիր. Ծրագրով նախատեսված աշխատանքների իրականացման նպատակով 2017թ. ծրագրված է 1,383.8 մլն. դրամ, այդ թվում վարկային միջոցներ՝ 1,153.2 մլն. դրամ, համաֆինանսավորում՝ 230.6 մլն. դրամ: Տես աղյուսակ N 9:

#### ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Գյուղատնտեսության ոլորտի համար 2017թ. նախատեսվում է հատկացնել 6,882.9 մլն դրամ՝ 2016 թ. հաստատված 8,037.8 մլն դրամի դիմաց: 2016 թ. նկատմամբ ծախսերի նվազումը կազմում է 1,154.9 մլն դրամ կամ 14.4 տոկոս:

Հատկացված միջոցներն ուղղվելու հիմնականում հետևյալ ծրագրերի իրականացմանը.

«Գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորում» ծրագրի համար նախատեսվում է հատկացնել 1,163.0 մլն դրամ՝ 2016 թ. հաստատված գումարի չափով:

«Պետական աջակցություն գյուղատնտեսական հողօգտագործողներին մատչելի գներով պարարտանյութերի ձեռքբերման համար» ծրագրի համար նախատեսվում է հատկացնել 2,110.0 մլն դրամ՝ 2016 թ. հաստատված 2,760.0 մլն դրամի դիմաց կամ 650.0 մլն դրամով պակաս: Նվազեցումը պայմանավորված է ծրագրի նախորդ տարիների փաստացի կատարողականով, ինչպես նաև 2016թ. վերջում պարարտանյութերի կանխատեսվելիք մնացորդների առկայությամբ:

«Անտառպահպանական ծառայություններ» ծրագրի համար նախատեսվում է հատկացնել 1,188.9 մլն դրամ՝ 2016 թ. հաստատված 1,201.5 մլն դրամի դիմաց կամ 12.6 մլն դրամով պակաս: Նվազեցումը պայմանավորված է «Հայանտառ» ՊՈԱԿ-ի ավտոմեքենաների սահմանաքանակների կրճատման արդյունքում ծախսերի կրճատմամբ, ինչպես նաև հանրապետությունում էլեկտրաէներգիայի սակագնի նվազման ազդեցությամբ:

Միաժամանակ գյուղատնտեսության ոլորտում նախատեսվում են շարունակել և իրականացնել արտաքին աղբյուրներից ստացվող նպատակային վարկային և դրամաշնորհային միջոցներով 6 ծրագրեր, որոնցից ամենախոշորներն են՝.

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության երկրորդ

ծրագիր. Ծրագրով նախատեսված աշխատանքների իրականացման նպատակով 2017թ. ծրագրված է 1,371.8 մլն. դրամ, այդ թվում վարկային միջոցներ՝ 1,222.9 մլն. դրամ, համաֆինանսավորում՝ 148.9 մլն. դրամ:

ՕՊԵԿ զարգացման միջազգային հիմնադրամի աջակցությամբ իրականացվող «Ենթակառուցվածքների և գյուղական ֆինանսավորման աջակցություն» ծրագիր. Ծրագրով նախատեսված աշխատանքների իրականացման նպատակով 2017թ. ծրագրված է 2,648.8 մլն. դրամ, այդ թվում վարկային միջոցներ՝ 2,167.5 մլն. դրամ, համաֆինանսավորում՝ 481,3 մլն. դրամ:

Տես աղյուսակ N 10:

### *ՋՐԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ*

Ջրային տնտեսության ոլորտի համար 2017թ. նախատեսվում է հատկացնել 21,062.7 մլն դրամ՝ 2016 թ. հաստատված 40,151.5 մլն դրամի դիմաց: Ծախսերի նվազեցումը 2016 թ. Նկատմամբ կազմում է 19,088.8 մլն դրամ կամ 52.5 տոկոս, որը մասամբ պայմանավորված է նաև 2017թ. հունվարի 1-ից խմելու ջրի ոլորտի ընկերությունների ջրային համակարգերը վարձակալության հանձնելու հանգամանքով:

Հատկացված միջոցներն ուղղվելու են հետևյալ հիմնական ծրագրերի իրականացմանը.

«Ոռոգում-ջրառ իրականացնող կազմակերպություններին ֆինանսական աջակցության տրամադրում» ծրագրի համար նախատեսվում է հատկացնել 1,131.6 մլն դրամ՝ 2016 թ. հաստատված 1,250.7 մլն դրամի դիմաց կամ 119.1 մլն դրամով պակաս:

«Ոռոգման ծառայություններ մատուցող ընկերություններին ֆինանսական աջակցության տրամադրում» ծրագրի համար նախատեսվում է հատկացնել 5,207.5 մլն դրամ՝ 2016 թ. հաստատված 5,837.7 մլն դրամի դիմաց կամ 630.2 մլն դրամով պակաս:

«Կոլեկտորադրենաժային ցանցի պահպանում և շահագործում, գրունտային ջրերի մակարդակների և որակի որոշման աշխատանքներ» ծրագրի համար նախատեսվում է հատկացնել 320.0 մլն դրամ՝ 2016 թ. հաստատված 321.7 մլն դրամի դիմաց:

Միաժամանակ ջրային տնտեսության ոլորտում նախատեսվում են շարունակել և իրականացնել արտաքին աղբյուրներից ստացվող նպատակային վարկային և դրամաշնորհային միջոցներով 13 ծրագրեր, որոնցից են՝

ՀԲ աջակցությամբ իրականացվող Ոռոգման համակարգերի արդյունավետության բարձրացման ծրագիր. Ծրագրով նախատեսված աշխատանքների իրականացման նպատակով 2017թ. ծրագրված է 2,137.2 մլն. դրամ, այդ թվում վարկային միջոցներ՝ 1,756.6 մլն. դրամ, համաֆինանսավորում՝ 380.6 մլն. դրամ:

Ֆրանսիայի Հանրապետության կառավարության աջակցությամբ իրականացվող Վերդու ջրամբարի կառուցման ծրագիր. Ծրագրով նախատեսված աշխատանքների իրականացման նպատակով 2017թ. ծրագրված է 1,185.3 մլն. դրամ, այդ թվում վարկային միջոցներ՝ 950.4 մլն. դրամ, համաֆինանսավորում՝ 234.9 մլն. դրամ:

ՎՋԵԲ աջակցությամբ իրականացվող Երևանի ջրամատակարարման բարելավման ծրագիր (Երևան համայնքի ղեկավարին պետության կողմից պատվիրակված լիազորություն). Ծրագրով նախատեսված աշխատանքների իրականացման նպատակով 2017թ. ծրագրված է 969.1 մլն. դրամ, այդ թվում վարկային միջոցներ՝ 772.0 մլն. դրամ, համաֆինանսավորում՝ 197.1 մլն. դրամ:

Եվրոպական ներդրումային բանկի աջակցությամբ իրականացվող Երևանի ջրամատակարարման բարելավման ծրագիր (Երևան համայնքի ղեկավարին պետության կողմից պատվիրակված լիազորություն). Ծրագրով նախատեսված աշխատանքների իրականացման նպատակով 2017թ. ծրագրված է 958.7 մլն. դրամ, այդ թվում վարկային միջոցներ՝ 798.9 մլն. դրամ, համաֆինանսավորում՝ 159.8 մլն. դրամ:

Եվրոպական միության հարևանության ներդրումային ծրագրի աջակցությամբ իրականացվող Երևանի ջրամատակարարման բարելավման դրամաշնորհային ծրագիր (Երևան համայնքի ղեկավարին պետության կողմից պատվիրակված լիազորություն). Ծրագրով նախատեսված աշխատանքների իրականացման նպատակով 2017թ. ծրագրված է 1,436.5 մլն. դրամ, այդ թվում դրամաշնորհային միջոցներ՝ 1,149.2 մլն. դրամ, համաֆինանսավորում՝ 287.3 մլն. դրամ:

Գերմանիայի զարգացման և Եվրոպական միության Հարևանության ներդրումային բանկի աջակցությամբ իրականացվող ջրամատակարարման և ջրահեռացման ենթակառուցվածքների դրամաշնորհային ծրագրի երրորդ փուլ. Ծրագրով նախատեսված աշխատանքների իրականացման նպատակով 2017թ. ծրագրված է 2,631.5 մլն. դրամ, այդ թվում դրամաշնորհային միջոցներ՝ 2,192.9 մլն. դրամ, համաֆինանսավորում՝ 438.6 մլն. դրամ:

Տես աղյուսակ N 11:

#### *ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐ*

Էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների ոլորտների գծով 2017թ. նախատեսվում է հատկացնել 38514.8 մլն դրամ՝ 2016 թ. 32398.0 մլն դրամի դիմաց: Ծախսերի աճը 2016 թ. համապատասխան ցուցանիշի նկատմամբ կազմում է 6116.8 մլն դրամ կամ 18.9%:

Հատկացված միջոցներն ուղղվելու են հետևյալ ծրագրերի իրականացմանը.

«Ռադիոակտիվ թափոնների վնասազերծման ծառայություններ» ծրագիր. 34.8 մլն դրամ՝ 2016 թ. 35.2 մլն դրամի դիմաց:

«Ընդերքի մասին տեղեկատվության տրամադրման ծառայություն» ծրագիր. 20.6 մլն դրամ՝ 2016 թ. 20.5 մլն դրամի դիմաց:

Միաժամանակ էներգետիկայի ոլորտում նախատեսվում են շարունակել և իրականացնել արտաքին աղբյուրներից ստացվող նպատակային վարկային և դրամաշնորհային միջոցներով 13 ծրագրեր, որոնցից են՝

ՀԲ աջակցությամբ իրականացվող Էլեկտրամատակարարման հուսալիության ծրագիր. Ծրագրով նախատեսված աշխատանքների իրականացման նպատակով 2017թ. ծրագրված է 3,620.6 մլն. դրամ, այդ թվում վարկային միջոցներ՝ 3,186.4 մլն. դրամ, համաֆինանսավորում՝ 434.2 մլն. դրամ:

ՎԶՄԲ աջակցությամբ իրականացվող Էլեկտրամատակարարման հուսալիության ծրագրի լրացուցիչ ֆինանսավորման ծրագիր. Ծրագրով նախատեսված աշխատանքների իրականացման նպատակով 2017թ. ծրագրված է 5,069.7 մլն. դրամ, այդ թվում վարկային միջոցներ՝ 4,224.7 մլն. դրամ, համաֆինանսավորում՝ 845.0 մլն. դրամ:

ԱԶԲ աջակցությամբ իրականացվող Էլեկտրաէներգիայի հաղորդման ցանցի վերակառուցման շրջանակներում 220 կՎ «Ագարակ-2» և «Շինուհայր» ենթակայանների վերակառուցման ծրագիր. Ծրագրով նախատեսված

աշխատանքների իրականացման նպատակով 2017թ. ծրագրված 1,474.4 մլն. դրամ, այդ թվում վարկային միջոցներ՝ 1,029.8 մլն. դրամ, համաֆինանսավորում՝ 444.6 մլն. դրամ:

ՌԴ աջակցությամբ իրականացվող Հայկական ԱԷԿ-ի N 2 էներգաբլոկի շահագործման ժամկետի երկարացման ծրագիր. Ծրագրով նախատեսված աշխատանքների իրականացման նպատակով 2017թ. ծրագրված է 14,874.4 մլն. դրամ, այդ թվում վարկային միջոցներ՝ 14,206.7 մլն. դրամ, համաֆինանսավորում՝ 667.7 մլն. դրամ:

ՎԶՄԲ աջակցությամբ իրականացվող Էլեկտրահաղորդման ցանցի բարելավման շրջանակներում Երևանի ԶԷԿ-ի ենթակայանի վերակառուցման ծրագիր. Ծրագրով նախատեսված աշխատանքների իրականացման նպատակով 2017թ. ծրագրված է 1,043.0 մլն. դրամ, այդ թվում վարկային միջոցներ՝ 672.8 մլն. դրամ, համաֆինանսավորում՝ 370.2 մլն. դրամ:

ՀԲ աջակցությամբ իրականացվող Էլեկտրաէներգետիկական ոլորտի ֆինանսական առողջացման ծրագիր. Ծրագրով նախատեսված աշխատանքների իրականացման նպատակով 2017թ. ծրագրված է 3,285.3 մլն. դրամ վարկային միջոցներ:

ՌԴ աջակցությամբ իրականացվող Հայկական ԱԷԿ-ի N2 էներգաբլոկի շահագործման նախագային ժամկետի երկարացման դրամաշնորհային ծրագիր. Ծրագրով նախատեսված աշխատանքների իրականացման նպատակով 2017թ. ծրագրված է 1,599.3 մլն. դրամ, այդ թվում դրամաշնորհային միջոցներ՝ 1,562.2 մլն. դրամ, համաֆինանսավորում՝ 37.1 մլն. դրամ:

ՀԲ աջակցությամբ իրականացվող Երկրաջերմային հետախուզական հորատման դրամաշնորհային ծրագիր. Ծրագրով նախատեսված աշխատանքների իրականացման նպատակով 2017թ. ծրագրված է 2,368.7 մլն. դրամ, այդ թվում դրամաշնորհային միջոցներ՝ 1,973.9 մլն. դրամ, համաֆինանսավորում՝ 394.8 մլն. դրամ:

ԵՄ Հարևանության Ներդրումային գործիքի աջակցությամբ իրականացվող «Կովկասյան Էլեկտրահաղորդման ցանց I» Հայաստան-Վրաստան հաղորդիչ գիծ/ենթակայանների դրամաշնորհային ծրագիր. Ծրագրով նախատեսված աշխատանքների իրականացման նպատակով 2017թ. ծրագրված է 995.9 մլն. դրամ, այդ թվում դրամաշնորհային միջոցներ՝ 919.8 մլն. դրամ, համաֆինանսավորում՝ 76.1 մլն. դրամ:

Տես աղյուսակ N 12:

#### ՏՐԱՆՍՊՈՐՏ ԵՎ ԿԱՊ

Տրանսպորտի և կապի ոլորտների գծով 2017 թ. նախատեսվում է 49,806.9 մլն դրամ՝ 2016 թ. 57,780.6 մլն դրամի դիմաց: Ծախսերի նվազումը 2016 թ. պետական բյուջեի համապատասխան ցուցանիշի նկատմամբ կազմում է 7,973.7 մլն դրամ կամ 13.8 տոկոս:

Հատկացված միջոցներն ուղղվելու են հիմնականում հետևյալ ծրագրերի իրականացմանը.

«Միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների ձմեռային պահպանում, ընթացիկ պահպանում և շահագործում». Ծրագրի համար նախատեսվում է 7,449.5 մլն դրամ՝ 2016 թ. 6,256.7 մլն դրամի դիմաց:

«Մարզային նշանակության ավտոճանապարհների ճմեռային պահպանում, ընթացիկ պահպանում և շահագործում»։ Ծրագրով նախատեսվում է 999.8 մլն դրամ՝ 2016 թ. 837.9 մլն դրամի դիմաց։

«Երևանի մետրոպոլիտենի աշխատանքների կազմակերպման բնագավառում պետության կողմից համայնքի ղեկավարին պատվիրակված լիազորությունների իրականացման ֆինանսավորում» ծրագրով մետրոպոլիտենով ուղևորափոխադրումների սպասարկման որակի բարելավման և երթևեկության անվտանգության ապահովման նպատակով 2017 թ. նախատեսվում է 2,703.5 մլն դրամ։

«Պետական աջակցություն Երևան քաղաքի փողոցների ընթացիկ նորոգման և ճաքալցման աշխատանքների իրականացման համար» և «Պետական աջակցություն Երևան քաղաքի արտաքին լուսավորության ցանցի շահագործման և պահպանման աշխատանքների իրականացման համար» ծրագրերի գծով 2017 թ. նախատեսվում է համապատասխանաբար 3,284.0 մլն դրամ՝ 2016 թ. հաստատված գումարների չափով և 2,272.0 մլն դրամ՝ 2016 թ. 2,361.0 մլն դրամի դիմաց։

«Պետական նշանակության ավտոճանապարհների հիմնանորոգում» ծրագրի իրականացման համար 2017 թ. նախատեսվում է հատկացնել 4,160.0 մլն դրամ՝ 2016 թ. 3,060.0 մլն դրամի դիմաց։

«Տրանսպորտային օբյեկտների հիմնանորոգում» ծրագրի իրականացման համար 2017 թ. նախատեսվում է հատկացնել 840.0 մլն դրամ՝ 2016 թ. 940.0 մլն դրամի դիմաց։

Միաժամանակ տրանսպորտի ոլորտում նախատեսվում են շարունակել և իրականացնել արտաքին աղբյուրներից ստացվող նպատակային վարկային և դրամաշնորհային միջոցներով 24 ծրագրեր, որոնցից են՝

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Կենսական նշանակության ճանապարհացանցի լրացուցիչ ծրագիր. Ծրագրով նախատեսված աշխատանքների իրականացման նպատակով 2017թ. ծրագրված է 2,189.1 մլն. դրամ, այդ թվում վարկային միջոցներ՝ 1,837.1 մլն. դրամ, համաֆինանսավորում՝ 352.0 մլն. դրամ։

Ասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող Մ6 Վանաձոր-Ալավերդի-Վրաստանի սահման միջպետական նշանակության ճանապարհի վերականգնման և բարելավման ծրագիր. Ծրագրով նախատեսված աշխատանքների իրականացման նպատակով 2017թ. Ծրագրված է 941.2 մլն. դրամ, այդ թվում վարկային միջոցներ՝ 812.0 մլն. դրամ, համաֆինանսավորում՝ 129.2 մլն. դրամ։

ԱԶԲ աջակցությամբ իրականացվող Հյուսիս-հարավ տրանսպորտային միջանցքի զարգացման ծրագիր (Տրանշ 2). Ծրագրով նախատեսված աշխատանքների իրականացման նպատակով 2017թ. ծրագրված է 2,401.1 մլն. դրամ, այդ թվում վարկային միջոցներ՝ 2,028.6 մլն. դրամ, համաֆինանսավորում՝ 372,5 մլն. դրամ։

Եվրոպական ներդրումային բանկի աջակցությամբ իրականացվող Հյուսիս-հարավ տրանսպորտային միջանցքի զարգացման ծրագիր (Տրանշ 3). Ծրագրով նախատեսված աշխատանքների իրականացման նպատակով 2017թ. ծրագրված է 968.4 մլն. դրամ, այդ թվում վարկային միջոցներ՝ 807.0 մլն. դրամ, համաֆինանսավորում՝ 161.4 մլն. դրամ։

Ասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող Հյուսիս-հարավ տրանսպորտային միջանցքի զարգացման ծրագիր (Տրանշ 3). Ծրագրով

նախատեսված աշխատանքների իրականացման նպատակով 2017թ. ծրագրված է 1,353.8 մլն. դրամ, այդ թվում վարկային միջոցներ՝ 1,154.4 մլն. դրամ, համաֆինանսավորում՝ 199.4 մլն. դրամ:

Եվրոպական ներդրումային բանկի աջակցությամբ իրականացվող Հյուսիս-հարավ տրանսպորտային միջանցքի զարգացման դրամաշնորհային ծրագիր (Տրանշ 3). Ծրագրով նախատեսված աշխատանքների իրականացման նպատակով 2017թ. ծրագրված է 1,139.3 մլն. դրամ, այդ թվում դրամաշնորհային միջոցներ՝ 949.4 մլն. դրամ, համաֆինանսավորում՝ 189.9 մլն. դրամ:

Եվրոպական ներդրումային բանկի աջակցությամբ իրականացվող Երևանի մետրոպոլիտենի վերակառուցման երկրորդ ծրագիր (Երևան համայնքի ղեկավարին պետության կողմից պատվիրակված լիազորություն). Ծրագրով նախատեսված աշխատանքների իրականացման նպատակով 2017թ. ծրագրված է 1,841.5 մլն. դրամ, այդ թվում վարկային միջոցներ՝ 1,397.8 մլն. դրամ, համաֆինանսավորում՝ 443.7 մլն. դրամ:

Եվրոպական միության հարևանության ներդրումային ծրագրի աջակցությամբ իրականացվող Երևանի մետրոպոլիտենի վերակառուցման երկրորդ դրամաշնորհային ծրագիր (Երևան համայնքի ղեկավարին պետության կողմից պատվիրակված լիազորություն). Ծրագրով նախատեսված աշխատանքների իրականացման նպատակով 2017թ. ծրագրված է 1,560.9 մլն. դրամ, այդ թվում դրամաշնորհային միջոցներ՝ 1,248.7 մլն. դրամ, համաֆինանսավորում՝ 312.2 մլն. դրամ:

ԱԶԲ աջակցությամբ իրականացվող Քաղաքային ենթակառուցվածքների և քաղաքի կայուն զարգացման ներդրումային ծրագիր (Երևան համայնքի ղեկավարին պետության կողմից պատվիրակված լիազորություն). Ծրագրով նախատեսված աշխատանքների իրականացման նպատակով 2017թ. ծրագրված է 3,544.9 մլն. դրամ, այդ թվում վարկային միջոցներ՝ 3,183.5 մլն. դրամ, համաֆինանսավորում՝ 361.5 մլն. դրամ:

Ասիական բանկի աջակցությամբ իրականացվող Քաղաքային ենթակառուցվածքների և քաղաքի կայուն զարգացման ներդրումային երկրորդ ծրագիր (Երևան համայնքի ղեկավարին պետության կողմից պատվիրակված լիազորություն). Ծրագրով նախատեսված աշխատանքների իրականացման նպատակով 2017թ. ծրագրված է 4,220.9 մլն. դրամ, այդ թվում վարկային միջոցներ՝ 3,792.3 մլն. դրամ, համաֆինանսավորում՝ 428.6 մլն. դրամ:

Տես աղյուսակ N 13:

### *ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ*

Բնապահպանության ոլորտի գծով 2017թ. նախատեսվում է հատկացնել 2,898.1 մլն դրամ՝ 2016 թ. հաստատված 2,924.6 մլն դրամի դիմաց:

Հատկացված միջոցներն ուղղվելու են հիմնականում հետևյալ ծրագրերի իրականացմանը.

«Հանրապետության ջրային օբյեկտների և օդային ավազանի աղտոտվածության վիճակի մոնիտորինգի իրականացում» ծրագրի համար նախատեսվում է հատկացնել 160.4 մլն դրամ՝ 2016 թ. հաստատված 160.7 մլն դրամի դիմաց:

«Սևանա լճի ջրածածկ անտառտնկարկների մաքրում» ծրագրի համար նախատեսվում է հատկացնել 125.4 մլն դրամ՝ 2016 թ. հաստատված գումարի չափով:

Բնության հատուկ պահպանվող տարածքների գործունեության ապահովմանն ուղղված ծրագրերի համար նախատեսվում է հատկացնել 797.3 մլն դրամ՝ 2016թ. 856.9 մլն դրամի դիմաց:

«Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով նախատեսվել է համայնքներին սուբվենցիաների հատկացումներ՝ 137.6 մլն դրամի չափով:

Միաժամանակ ոլորտում նախատեսվում են շարունակել և իրականացնել արտաքին աղբյուրներից ստացվող նպատակային վարկային և դրամաշնորհային միջոցներով 7 ծրագրեր, որոնցից ամենախոշորը Եվրոպական միության հարևանության ներդրումային գործիքի աջակցությամբ իրականացվող «Երևանի կոշտ թափոնների կառավարման» դրամաշնորհային ծրագիրն է (Երևան համայնքի ղեկավարին պետության կողմից պատվիրակված լիազորություն): Ծրագրով նախատեսված աշխատանքների իրականացման նպատակով 2017թ. ծրագրված է 2,955.4 մլն. դրամ, այդ թվում դրամաշնորհային միջոցներ՝ 2,599.4 մլն. դրամ, համաֆինանսավորում՝ 356.0 մլն. դրամ:

Տես աղյուսակ N 14:

### *ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՅՈՒՄ ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐ*

ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության կողմից իրականացվող ծախսային ծրագրերի համար 2017 թ. նախատեսվում է հատկացնել 2,649.0 մլն դրամ՝ 2016 թ. պետական բյուջեով հաստատված 2,991.0 մլն դրամի դիմաց: Ծախսերի նվազումը 2016 թ. պետական բյուջեի համապատասխան ցուցանիշի նկատմամբ կազմում է 342.0 մլն դրամ կամ 11.4 տոկոս:

Հատկացված միջոցներն ուղղվելու են հիմնականում հետևյալ ծրագրերի իրականացմանը.

«Պետական աջակցություն Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ հիմնադրամի կանոնադրական հիմնախնդիրների իրականացմանը» ծրագրի համար նախատեսվում է հատկացնել 152.6 մլն դրամ՝ 2016 թ. հաստատված գումարի չափով:

«Զբոսաշրջության աջակցության ծառայություններ» ծրագրի համար նախատեսվում է հատկացնել 100.0 մլն դրամ՝ 2016 թ. 188.4 մլն դրամի դիմաց:

«Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի խթանման ծառայություններ» ծրագրի համար նախատեսվում է հատկացնել 98.7 մլն դրամ՝ 2016 թ. հաստատված գումարի չափով:

«Պետական աջակցություն «Հայաստանի զարգացման հիմնադրամի կանոնադրական խնդիրների իրականացմանը» ծրագրի համար նախատեսվում է հատկացնել 400.0 մլն դրամ՝ 2016 թ. 409.0 մլն դրամի դիմաց:

«ՀՀ արտահանմանն ուղղված արդյունաբերական քաղաքականության ռազմավարությամբ նախատեսված միջոցառումների իրականացման պետական աջակցություն» ծրագրի համար նախատեսվում է հատկացնել 475.0 մլն դրամ՝ 2016 թ. հաստատված գումարի չափով:

«Գյումրու և Վանաձորի տեխնոլոգիական կենտրոնների գործունեության իրականացում» ծրագրի համար նախատեսվում է հատկացնել 150.5 մլն դրամ՝ 2016 թ. 152.9 մլն դրամի դիմաց:

«Հայաստանում ներդրումային միջավայրի բարեփոխումներ» ծրագրի համար նախատեսվում է հատկացնել 21.0 մլն դրամ (երրորդ մասնաբաժին)՝ 2016 թ. 16.9 մլն դրամի (երկրորդ մասնաբաժին) դիմաց:

«2019թ. Տեղեկատվական տեխնոլոգիաների համաշխարհային համաժողովի կազմակերպում» ծրագրի համար նախատեսվում է հատկացնել 94.9 մլն դրամ:  
Տես աղյուսակ N 15:

*ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ*

Քաղաքաշինության ոլորտի գծով 2017 թ. նախատեսվում է հատկացնել 6,330.9 մլն դրամ՝ 2016 թ. համար հաստատված 9,082.6 մլն դրամի դիմաց: 2016 թ. պետական բյուջեի համապատասխան ցուցանիշի նկատմամբ ծախսերի նվազումը կազմում է շուրջ 30.0 %:

Քաղաքաշինության ոլորտի գծով 2017թ. ծախսերը հիմնականում նախատեսվել են հետևյալ ուղղություններով.

Կրթական, մարզական, մշակութային և առողջապահական օբյեկտների հիմնանորոգման և շինարարության գծով ծախսերը նախատեսվել են 3,222.8 մլն դրամի չափով, որը 2016 թվականի համար հաստատված համապատասխան ցուցանիշից (4,417.5 մլն դրամ) պակաս է 1,194.7 մլն դրամով:

«Հուշարձանների ամրակայում, նորոգում և վերականգնում» ծրագրի գծով նախատեսվել է 250.0 մլն դրամ՝ 2016 թ. համար հաստատված 300.0 մլն դրամի դիմաց:

Բնակարանային ապահովման գծով ծախսերը նախատեսվել են 500.0 մլն դրամի չափով, որը 2016 թ. համար հաստատված համապատասխան ցուցանիշից պակաս է 1,934.5 մլն դրամով: 2016 թ. պետական բյուջեի համապատասխան ցուցանիշի նկատմամբ ծախսերի նվազումը պայմանավորված է այն հանգամանքով, որ բնակարանային շինարարության և երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների բնակարանային ապահովման ծրագրերի գծով 2017 թվականի համար միջոցներ չեն նախատեսվել: Բնակարանային ապահովման գծով 2017 թվականի նախատեսված հատկացումները կուղղվեն միայն «Զոհված (մահացած) և առաջին, երկրորդ և երրորդ կարգի հաշմանդամ զինծառայողների անօթևան ընտանիքներին բնակարանով ապահովում և բնակարանային պայմանների բարելավում» ծրագրին, որի շրջանակներում նախատեսվում է լուծել 62 ընտանիքների բնակարանային ապահովման խնդիրները:

Ոլորտի գծով 2017 թ., որպես այլ կապիտալ ծախսեր, նախատեսված է 1,144.2 մլն դրամ:

Տես աղյուսակ N 16:

*ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԿԱԴԱՍՏՐ*

Անշարժ գույքի պետական ռեգիստրի համակարգի գծով 2017 թ. նախատեսվում է 3,898.5 մլն դրամի ծախսեր՝ 2016 թ. 4,304.8 մլն դրամի դիմաց կամ 9.4 %-ով պակաս: Հատկացվող միջոցներից համակարգի պահպանման ծախսերը կկազմեն 3,477.9 մլն դրամ՝ 2016 թ. 3,791.6 մլն դրամի դիմաց, իսկ համակարգի կարողությունների զարգացմանն ուղղվող ծախսերը կկազմեն 420.6 մլն դրամ՝ 2016 թ. 513.3 մլն դրամի դիմաց: Համակարգի կարողությունների զարգացման 2017 թվականի ծախսերն ամբողջությամբ կուղղվեն գեոդեզիական և քարտեզագրական աշխատանքներին:

Տես աղյուսակ N 17:



## ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Պաշտպանության բնագավառի ծախսերը 2017 թ. պետական բյուջեի նախագծով նախատեսվել են 205,313.3 մլն դրամ, որից ռազմական կարիքների բավարարմանը՝ 197,642.3 մլն դրամ:

2017 թ. պետական բյուջեի նախագծով պաշտպանության բնագավառի այլ ծախսերը հաշվարկվել են 7,671.0 մլն դրամ, որից՝

«Պաշտպանության բնագավառի այլ ծախսեր» ծրագրով՝ 5,552.4 մլն դրամ,

«Հումանիտար ականազերծման և փորձագիտական ծառայությունների կազմակերպում» ծրագրով՝ 249.4 մլն դրամ,

զորակոչիկներին վարորդական իրավունքի վկայականների տրման և քննությունների ընդունման ծախսեր, որի գումարը կազմում է՝ 50.4 մլն դրամ,

«Այլընտրանքային աշխատանքային ծառայություն» ծրագրով՝ 50.7 մլն դրամ,

«Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպություններում ՀՀ առաքելությունում ՀՀ պահպանություն» ծրագրով՝ 48.3 մլն դրամ,

«Ռազմական նշանակության համակարգերի պահպանում» ծրագրով՝ 1,719.8 մլն դրամ:

### ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՐԳ, ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ, ՓՐԿԱՐԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿԱԼԱՆԱԿԱՅՐԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Հասարակական կարգի, անվտանգության, փրկարար ծառայության և կալանավայրերի պահպանության համակարգերի ծախսերի ֆինանսավորմանը 2017 թ. պետական բյուջեից նախատեսվում է ուղղել 81,278.9 մլն դրամ: Նշված ծախսերը ներառում են ՀՀ ոստիկանության, ազգային անվտանգության ծառայության, պետական պահպանության ծառայության, փրկարար ծառայության և քրեակատարողական համակարգի ծախսերի ֆինանսավորումները: Մասնավորապես՝

ՀՀ ոստիկանության 2017 թ. պահպանման ծախսերը նախատեսվել են 36,413.0 մլն դրամի չափով, որն ամբողջությամբ ուղղվելու է ընթացիկ ծախսերի ֆինանսավորմանը: ՀՀ Ոստիկանության 2017 թվականի պահպանման ծախսերի կառուցվածքը հետևյալն է.

Աշխատողների աշխատավարձերի, հավելավճարների և քաղաքացիական ծառայողների պարգևատրումները 2017 թ. ծրագրավորվել են 31,658.9 մլն դրամի չափով, որը 2016 թ. պետական բյուջեի նկատմամբ աճել է 3,2 մլն դրամով:

Փրկարար ծառայության 2017 թ. պետական բյուջեի նախագծով նախատեսվում է 7,428.9 մլն դրամ, որն ամբողջությամբ ուղղվելու է ընթացիկ ծախսերի ֆինանսավորմանը:

Աշխատողների աշխատավարձերի, հավելավճարների և քաղաքացիական ծառայողների պարգևատրումները 2017 թ. պետական բյուջեի նախագծում նախատեսվել են 6,633.3 մլն դրամի չափով:

Քրեակատարողական ծառայության 2017 թ. պահպանման ծախսերը նախատեսվել են 8,525.0 մլն դրամ, որն ամբողջությամբ ուղղվելու է ընթացիկ ծախսերի, ֆինանսավորմանը:

Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարները 2017 թ. ծրագրավորվել են 6,026.0 մլն դրամի չափով, որը 2016 թ. պետական բյուջեի նկատմամբ կրճատվել է 301.4 մլն դրամի չափով:

Ազգային անվտանգության ծառայության 2017 թ. պահպանման ծախսերը նախատեսվել է 19,941.5 մլն դրամ, որից՝ 19,790.0 մլն դրամն ուղղվելու է ընթացիկ ծախսերի, իսկ 151.5 մլն դրամը՝ ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի ֆինանսավորմանը:

Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարները 2017 թ. ծրագրավորվել են 16,225.6 մլն դրամի չափով:

Պետական պահպանության ծառայությանը 2017 թ. նախատեսվում է 2,728.6 մլն դրամ, որն ամբողջությամբ ուղղվելու է ընթացիկ ծախսերի ֆինանսավորմանը:

Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարները 2017 թ. ծրագրավորվել են 2,119.8 մլն դրամի չափով, որը 2016 թ. պետական բյուջեի նկատմամբ ավել է նախատեսվել 3.7 մլն դրամով:

### *ՀԱՏԿԱՅՈՒՄՆԵՐ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԲՅՈՒՋԵՆԵՐԻՆ*

ՀՀ 2016 թ. պետական բյուջեի նախագծով նախատեսվում են.

*Ֆինանսական համահարթեցման և այլ դոփացիաներ.*

ֆինանսական համահարթեցման սկզբունքով համայնքներին տրամադրվող դոտացիաներ՝ 48,068.3 մլն դրամ,

համայնքների 2015 թ. բյուջեների եկամուտների կորուստների փոխհատուցման ենթակա գումար՝ 52 մլն դրամ,

առանձին տողով հատկացումներ ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանին՝ 4.9 մլն դրամ,

պետական աջակցություն Սահմանամերձ համայնքներին՝ շուրջ 928.9 մլն դրամ:

Սուբվենցիաներ.

բնապահպանական սուբվենցիաների հատկացումներ համայնքներին՝ 137.6 մլն դրամ,

սուբվենցիաների հատկացում Երևանի քաղաքային համայնքի ծրագրերի իրականացմանն աջակցելու համար՝ 8.3 մլրդ դրամ:

Տես աղյուսակ N 18:

### *ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԻ ԵՎ ՆՅՈՒԹԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՀՈՒՍՏԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԵՎ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԾԱԽՍԵՐ*

2017 թ. պետական բյուջեով նախատեսվող ՀՀ կառավարության պահուստային ֆոնդի ծավալը նախատեսված է շուրջ 8.3 մլրդ դրամ (2017 թ. ծախսերի 0.6 %-ը):

2017 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվել են նաև հատկացումներ նյութական ռեսուրսների պետական պահուստի պահպանման և ձևավորման, ինչպես նաև ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության պետական ռեզերվների գործակալության համակարգի ստորաբաժանումների պահպանման համար, համապատասխանաբար 26.0 մլն դրամ և 280.5 մլն դրամ:

**.4.**  
**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**  
**ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՆԱԽԱԳԾԻ ԴԵՖԻՑԻՏԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ**  
**ԱՂԲՅՈՒՐՆԵՐՆ ՈՒ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏՔԸ**

*ԴԵՖԻՑԻՏԸ ԵՎ ԴՐԱ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ*

2017 թ. պետական բյուջեի նախագծով դեֆիցիտի գումարը ծրագրավորվում է 150.1 մլրդ դրամ: Դեֆիցիտի ֆինանսավորումը նախատեսվում է իրականացնել ներքին՝ 71.1 մլրդ դրամ և արտաքին աղբյուրների՝ 79.0 մլրդ դրամ զուտ մուտքերի հաշվին: (Տես աղյուսակ N 19):

*ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՎԱՐԿԵՐ*

2017 թ. պետական բյուջեի նախագծով զուտ վարկավորման ընդհանուր ծավալը ծրագրավորված է 41.0 մլրդ դրամ:

2017 թ. պետական բյուջեից տրամադրվելիք վարկերի ընդհանուր գումարը նախագծով նախատեսվում է սահմանել 75.8 մլրդ դրամ: Մասնավորապես.

ՀՀ կողմից ցուցաբերվող արտաքին տնտեսական աջակցության շրջանակներում բյուջետային վարկեր տրամադրելու համար առանձնացվել են 47.4 մլրդ դրամ հատկացումներ՝ դրանք ամբողջությամբ ԼՂՀ-ին բյուջետային վարկի տրամադրմանն ուղղելու նպատակով:

Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի աջակցությամբ իրականացվող «Էլեկտրամատակարարման հուսալիության», Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի աջակցությամբ իրականացվող Էլեկտրամատակարարման հուսալիության ծրագրի լրացուցիչ ֆինանսավորման, ՌԴ աջակցությամբ իրականացվող Հայկական ԱԷԿ-ի N 2 էներգաբլոկի շահագործման նախագծային ժամկետի երկարացման, Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի աջակցությամբ իրականացվող էներգետիկայի ոլորտի ֆինանսական առողջացման, Գյուղատնտեսության զարգացման միջազգային հիմնադրամի աջակցությամբ իրականացվող «Ենթակառուցվածքների և գյուղական ֆինանսավորման աջակցություն» վարկային ծրագրերի և Դանիայի թագավորության աջակցությամբ իրականացվող Գյուղական կարողությունների ստեղծում դրամաշնորհային ծրագրերի շրջանակներում նախատեսվում է տրամադրել շուրջ 28.4 մլրդ դրամի բյուջետային վարկեր:

մուտքեր Վրաստանից, ինչպես նաև մի շարք տնտեսվարող սուբյեկտներից՝ պետության կողմից նախորդ տարիներին իրենց տրամադրված բյուջետային վարկերի մարումների գծով պետական բյուջե կատարվելիք վճարումներից՝ շուրջ 34.8 մլրդ դրամ:

*ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏՔԸ*

**Ներքին պետական պարտք.** 2016 թ. վերջի դրությամբ ՀՀ ներքին պետական պարտքի ծավալն անվանական արժեքով կկազմի մոտ 451.7 մլրդ դրամ, որից շրջանառելի պարտատոմսերի ծավալը՝ 448.4 մլրդ դրամ, ՀՀ ներքին պետական երաշխիքները՝ 3.3 մլրդ դրամ: 2015 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ ներքին պետական պարտքի ընդհանուր ծավալն անվանական արժեքով կազմել էր 368.4 մլրդ դրամ, որից ռեզիդենտների կողմից ձեռքբերված պետական գանձապետական

պարտատոմսերի ծավալը՝ 320.0 մլրդ դրամ, ռեզիդենտների կողմից ձեռքբերված արտարժույթային գանձապետական պարտատոմսերի ծավալը՝ 47.4 մլրդ դրամ, իսկ ՀՀ ներքին պետական երաշխիքները՝ 1.0 մլրդ դրամ: Պարտքի միջին ժամկետայնությունը 2016 թ. սեպտեմբեր 27-ի դրությամբ կազմել է 2209 օր, միջին կշռված եկամտաբերությունը՝ 13.7%:

2015 թ. վերջի դրությամբ շրջանառության մեջ գտնվող պարտատոմսերի 7.0%-ը կարճաժամկետ, 48.0%-ը միջնաժամկետ և 45.0%-ը երկարաժամկետ պարտատոմսերն էին: 2016 թ. վերջի դրությամբ նախատեսվում է, որ շրջանառության մեջ գտնվող պարտատոմսերի 7.8%-ը կլինեն կարճաժամկետ, 45.9%-ը՝ միջնաժամկետ և 46.3%-ը՝ երկարաժամկետ պարտատոմսեր:

2017թ. կիրականացվեն նոր 3,5 և 10 տարի մարման ժամկետով պարտատոմսերի թողարկումներ:

Շրջանառության մեջ գտնվող պետական (գանձապետական) պարտատոմսերի սպասարկման գծով 2017 թ. պետական բյուջեով անհրաժեշտ է նախատեսել շուրջ 51.5 մլրդ դրամ սպասարկման ծախս: Պետական (գանձապետական) պարտատոմսերի հաշվին 2017 թ. պետական բյուջեի դեֆիցիտը կֆինանսավորվի 45.0 մլրդ դրամով: 2017 թ. վերջին ՀՀ պետական գանձապետական պարտատոմսերի ծավալն անվանական արժեքով կկազմի մոտ 500.0 մլրդ դրամ, միջին ժամկետայնությունը՝ մոտ 5 տարի:

**Արտաքին պետական պարտք.** 2015 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ արտաքին պետական պարտքը (ՀՀ կառավարության և ՀՀ կենտրոնական բանկի արտաքին պարտավորություններ) կազմել է 4,316 մլն ԱՄՆ դոլար և կանխատեսումների համաձայն՝ 2016 թ. տարեվերջին այն կկազմի մոտ 4,913 մլն ԱՄՆ դոլար:

2016 թ. ընթացքում արտաքին պարտավորությունների գծով կստացվի մոտ 550 մլն ԱՄՆ դոլար, այդ թվում՝ ՀՀ կառավարության պարտավորությունների գծով 467 մլն ԱՄՆ դոլար և ԿԲ-ի պարտավորությունների գծով՝ մոտ 83 մլն ԱՄՆ դոլար և կկատարվի մոտ 108 մլն ԱՄՆ դոլարի հիմնական գումարի մարում, որից 71 մլն ԱՄՆ դոլար ՀՀ կառավարության պարտավորությունների գծով:

2016 թ. ընթացքում ՀՀ արտաքին պետական պարտքի գծով ընդհանուր սպասարկումը կկազմի մոտ 234 մլն ԱՄՆ դոլար: Միայն ՀՀ կառավարության գծով 2015 թ. այն կկազմի մոտ 357 մլն ԱՄՆ դոլար: Միայն ՀՀ կառավարության գծով 2016 թվականին այն կկազմի մոտ 191 մլն ԱՄՆ դոլար, որից 71 մլն ԱՄՆ դոլար՝ մարում և 120 մլն ԱՄՆ դոլար՝ տոկոսավճար:

2017 թ. ընթացքում, ՀՀ ԱՊՊ գծով նախատեսվում է ստանալ մոտ 449 մլն ԱՄՆ դոլար՝ այդ թվում ՀՀ կառավարության պարտավորությունների գծով 373 մլն ԱՄՆ դոլարի արտաքին միջոցներ:

2017 թ. ընթացքում նախատեսվում է, որ ՀՀ ԱՊՊ գծով սպասարկումը կկազմի 296 մլն ԱՄՆ դոլար, որից 145 մլն ԱՄՆ դոլար հիմնական գումարի մարման գծով և 151 մլն ԱՄՆ դոլար որպես տոկոսավճար, այդ թվում՝ ՀՀ կառավարության պարտավորությունների գծով մոտ 100 մլն ԱՄՆ դոլարի հիմնական գումարի մարում և 76 մլն ԱՄՆ դոլարի տոկոսավճար:

Հաշվի առնելով վերը նշվածը, 2016 թ. տարեվերջին ՀՀ ԱՊՊ կկազմի 5,217 մլն ԱՄՆ դոլար: